

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի թիվ 166 Ն որոշմամբ հաստատված «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրոքերների, ներդրումային ընկերությունների, Կենտրոնական դեպոզիտարիայի և դրամական փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից տեղեկությունների հրապարակումը» կանոնակարգ 8/03-ի

ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԲԱՅԱՏՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ



ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ



Սիրելի՛ հաճախորդ, տեղեկացնում ենք, որ Ձեր իրավունքները կարող են պաշտպանվել ինչպես **դատական** կարգով, այնպես էլ **Ֆինանսական համակարգի հաշտարարի** միջոցով:



Դատարան դիմելու դեպքում Ձեր և ՄոբիԴրամ ՓԲԸ-ի միջև ծագած վեճը լուծում է դատարանը: Դուք կարող եք դիմել դատարան բողոքի քննության ցանկացած փուլում: Դատարանի վճիռը չի կարող վերանայվել Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից:

Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու դեպքում Ձեր և ՄոբիԴրամ ՓԲԸ-ի միջև ծագած վեճը լուծում է Հաշտարարը՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Ֆինանսական համակարգի հաշտարարի ծառայություններն անվճար են:

Բողոք ունենալու դեպքում Դուք նախևառաջ պետք է դիմեք ՄոբիԴրամ ՓԲԸ: ՄոբիԴրամ ՓԲԸ-ն պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատասխանել Ձեր բողոքին: ՄոբիԴրամ ՓԲԸ-ն պատասխանը ստանալուց հետո Դուք կարող եք դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին:

Ֆինանսական համակարգի հաշտարարը չի կարող քննել Ձեր բողոքը, եթե՝

1. Բողոք ներկայացնելուց հետո դեռ չի անցել 10 աշխատանքային օր և Դուք չեք ստացել ՄոբիԴրամ ՓԲԸ-ի պատասխանը, կամ
2. Դուք չեք պահանջում դրամական կամ այլ գույքային հատուցում, կամ
3. Ձեր կողմից պահանջվող հատուցումը գերազանցում է 10 միլիոն դրամը (կամ դրան համարժեք արտարժույթով գումարը), կամ
4. ՄոբիԴրամ ՓԲԸ-ն պատասխանը ստանալուց հետո անցել է ավելի քան վեց ամիս, կամ
5. Ձեր կողմից բողոքարկվող գործողությունը կամ անգործությունը տեղի է ունեցել 2008թ. օգոստոսի 2-ից առաջ:



Զգուշացնում ենք նաև, որ Ֆինանսական համակարգի հաշտարարը չի կարող քննել Ձեր բողոքը, եթե այն քննվում է դատարանի (կամ արբիտրաժային տրիբունալի) կողմից կամ արդեն իսկ առկա է այդ բողոքի վերաբերյալ դատարանի (կամ արբիտրաժային տրիբունալի) վճիռը:



Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ

Հաշտարար՝ Փիրուզ Մարգարյան
 Հասցե՝ ք. Երևան 0010, Մ.Խորենացու փող. 15, «Էլիտ Պլազա»
 քիզնես կենտրոն, 7-րդ հարկ.
 Հեռ.՝ (374) 60 70-11-11
 Էլ. հասցե՝ info@fsm.am
 Ֆաքս՝ (37410) 58-24-21
 կայք՝ www.fsm.am



Ընկերությունը այստեղ լրացնում է սույն հավելվածի 2-րդ էջում առկա * կամ ** նշանի ներքո պարունակվող տեղեկատվությունը, քնն որում՝

* այս նշումը կատարվում է, եթե Ընկերությունը Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի հետ կնքված գրավոր համաձայնագրով հրաժարվել է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից:

** այս նշումը կատարվում է, եթե ՄոբիԴրամ ՓԲԸ Ընկերությունը Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի հետ չի կնքել գրավոր համաձայնագիր Ֆինանսական համակարգի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ:



Դուք կարող եք մաս բողոքներով դիմել Կենտրոնական բանկ: Տեղեկացնում ենք, որ Կենտրոնական բանկն իրավասու չէ լուծել Ձեր և ՄոբիԴրամ ՓԲԸ-ի միջև վեճերը, սակայն կարող է ՄոբիԴրամ ՓԲԸ-ի նկատմամբ կիրառել պատասխանատվության միջոցներ, եթե պարզվի, որ ՄոբիԴրամ ՓԲԸ խախտել է օրենքի պահանջները:



ՀՀ Կենտրոնական բանկ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վ.Սարգսյան 6
Հեռ.՝ 010 59 26 97
Էլ. հասցե՝ chairman@cba.am
Ֆաքս՝ 010 56 54 96
կայք՝ www.cba.am



Հարգելի հաճախորդ, հայտնում ենք, որ եթե Ձեր և ՄոբիԴրամ ՓԲԸ միջև կնքվել է արբիտրաժային համաձայնություն, դա նշանակում է, որ ՄոբիԴրամ ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրից բխող վեճերը ենթակա են լուծման արբիտրաժային տրբունալի կողմից: Դուք գրկվում եք ՄոբիԴրամ ՓԲԸ հետ կնքված պայմանագրից բխող վեճերի կապակցությամբ դատարան դիմելու իրավունքից: Արբիտրաժային տրիբունալի վճիռները, որպես կանոն, դատարանի վերնայման ենթակա չեն:

*** Սիրելի՛ հաճախորդ, հայտնում ենք Ձեզ, որ ՄոբիԴրամ ՓԲԸ հրաժարվել է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից:**
Դա նշանակում է, որ ՄոբիԴրամ ՓԲԸ-ն չի կարող դատական կարգով վիճարկել Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից ՄոբիԴրամ ՓԲԸ-ի դեմ կայացված որոշումները:
**** Սիրելի՛ հաճախորդ, հայտնում ենք Ձեզ, որ ՄոբիԴրամ ՓԲԸ-ն չի հրաժարվել Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից:**
Դա նշանակում է, որ ՄոբիԴրամ ՓԲԸ-ն կարող է որոշ դեպքերում դատական կարգով վիճարկել Ֆինանսական համակարգի հաշտարարի ՄոբիԴրամ ՓԲԸ-ի դեմ կայացված որոշումները: